Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 03.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:10:59 AMT

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 52 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 3 դեպքի վարում (աջակցող պարագայի ձեռքբերման, նույնականացման քարտի ստացման կազմակերպում), 20 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 9 խմբակ /մասնակցել է 52 շահառու/՝
  - Գրական,
  - Ազգային պարեր,
  - Երգ,
  - Կինեզալոգիա,
  - Հմուտ ձեռքեր,
  - Կար,
  - Հոգևոր զրույցներ,
  - Առողջ ապրելակերպ,
  - Աշուղական:

  Կազմակերպվել է թվով 40 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 52 շահառու: Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝
  - ✓ «Սուրբ Ծնունդ» տոնի նշում,
  - ✓ Հին նոր տարվա միջոցառում,
  - ✓ Հայոց բանակի տոնի նշում,
  - ✓ Պ. Սևակի ծննդյան 100 ամյակին նվիրված միջոցառում,

- «Անանիա Շիրակացի» ճեմարանի սաների հյուրընկալում,
- Տեառնընդառաջի տոնի նշում,
- Թումանյանի 155 ամյակին նվիրված միջոցառում,
- Միջինքի տոն,
- Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում,
- Ծննդյան տարեդարձերի նշում,
- Սուրբ Զատկի նշում,
- Հյուրընկալում Չինաստանից ժամանած հյուրերի,
- Հյուրընկալում ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հոգեբաններին,
- Ներգնա տուր դեպի Արմավիրի մարզ՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր եւ Սուրբ Հռիփսիմե եկեղեցի,
- Կինոդիտում «Սինեմա Սթար» կինոթատրոնում,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Հայոց սուրբ ծնունդ» հոգեւոր, դասական համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան, «Մալեր» սիմֆոնիա, թիվ 1 «Տիտան» համերգ,
- Կամերային երաժշտության տուն, «Տաղարան» համույթ՝ «Աղեկ աղջիկ դուռը բաց...»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ՝ Բեթհովեն, Մոցարտ, Շուբերտ, դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան, դաշնակահար՝ Արմեն Բաբախանյան,
- Ա. Բաբաջաբյան համերգասրահ, Հայ գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ՝ Բախ Սի մինոր, Մեսսայի կատարումը՝ Հայաստանում առաջին անգամ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, դիրիժոր՝ Քրիստոֆ Կոնց, դաշնակահար՝ Ա Մալոֆեյեվ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ՝ «Բարեկամություն» պարի համույթի 37-րդ համերգաշրջանի բացում,
- Կամերային երաժշտության տուն, «Տաղարան» հնագույն երաժշտություն, Բարոկկո եւ Հայաստան համերգ,
- Ա. Բաբաջանյան համերգասրահ, «Գուսան» անսամբլի համերգ,
- Ա. Բաբաջանյան համերգասրահ, «Ակունք» ազգագրական համույթ,
- Կամերային Երաժշտության տուն, դաշնակահար՝ Հայկ Մելիքյանի մենահամարգը,
- Կամերային երաժշտության տուն, Հայաստանի պետական կամերային նվագախումբ, ֆրանսիական կոմպոզիտորների ստեղծագործություններ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Բարեկամություն» պարային համույթի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ Հայ կոմպոզիտորների արվեստ, 15-րդ փառատոնի բացման համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ՝ նվիրված «ֆրանկոֆոնիայի» միջազգային օրվան,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հայ կոմպոզիտորական 15-րդ փառատոնի համերգին
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգ՝ Վիվալդիի, Պագանինիի ստեղծագործությունները՝ Ն. Մադոյանի և Հ. Կազազյանի մասնակցությամբ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, համերգ նվիրված «ֆրանկոֆոնիայի» միջազգային օրվան,
- Ներկայացման դիտում՝ Գ.Սունդուկյանի անվան թատրոնում՝ «Հարսնացուն հյուսիսից»,
- Ներկայացման դիտում՝ Հ.Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնում, «Գանգսթեր Մաքը»,
- Հյուրընկալում Նորվեգիայի կառավարության և UNHCR Armenia-ի ներկայացուցիչներին,
- Հյուրընկալում «Տ. Չուխաջյանի» անվան երաժշտական դպրոցի սաներին:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 44 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 52)՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը: Իրականացվել են նաև նեյրոբիկ վարժություններ՝ ուղղված հիշողության, մտածողության զարգացմանը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվությունը խթանող խաղեր:
- Ցերեկային կենտրոնում բուժքրոջ կողմից իրականացվել է 52 շահառուի զարկերակային ճնշման չափում, 16 շահառուի՝ գլյուկոմետրիա: 52 շահառուի համար իրականացվել է սատուրացիայի ստուգում, 5 շահառուի ներարկում, 1 շահառուի ուղեկցում ԲԿ, ինչպես նաև հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացների պարբերաբար կազմակերպում:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 8 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:
- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը՝

- Հին Նոր տարվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/rxhdu, http://surl.li/rzbtc, http://surl.li/rxiuw),
- Հմուտ ձեռքեր խմբակի աշխատանքները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxhgi, http://surl.li/rzbye),
- Պարույր Սևակի 100 ամյակին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxhht, http://surl.li/rxjal),
- Անանիա Շիրակացու անվան ճեմարանի սաների հյուրընկալում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rybeq, http://surl.li/rxiwl),
- Տեառնընդառաջի տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rybce, http://surl.li/rxixd),
- Հ. Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rybbd, http://surl.li/rxjfw),
- Կանանց տոնին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ryazw, http://surl.li/rxjen),
- Լեոնիդ Ենգիբարյանին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ryaza),
- Այց պատմության թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rzbui),
- Վարսավիրական ծառայության կազմակերպում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxizp),
- Հյուրընկալում Չինաստանից ժամանած վաղեմի ընկերներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxjat),
- Հյուրընկալում ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի հոգեբաններին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxjbw),
- Այցելություն Արմավիրի մարզ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rxjcj),
- Հյուրընկալում Նորվեգիայի կառավարության և UNHCR Armenia-ի ներկայացուցիչներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/sdcun):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպվել է «Ֆունկցիաների միջազգային դասակարգում. ՖՄԴ կիրառման ճանապարհային քարտեզը» և 1744-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների մասին քննարկումներ, որոնց մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի՝ Նոր Նորքի կենտրոնի սոցիալական աշխատողները և պատասխանատուները:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/52 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 43 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 46 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 52 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 52 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը՝ «Գրական խմբակ» | 45 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ «Պարի խմբակ» | 12 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը՝ «Կինեզալոգիայի խմբակ» | 52 |
| 5.4 | Նշել խմբակի անվանումը՝ «Երգի խմբակ» | 33 |
| 5,5 | Նշել խմբակի անվանումը՝ «Հմուտ ձեռքեր» | 39 |
| 5,6 | Նշել խմբակի անվանումը՝ «Կարի խմբակ» | 6 |
| 5,7 | Նշել խմբակի անվանումը՝ «Հոգևոր զրույցներ» | 46 |
| 5,8 | Նշել խմբակի անվանումը՝«Արտ-թերապևտիկ աշխատանք» | 15 |
| 5.9 | Նշել խմբակի անվանումը՝ «Աշուղական խմբակ» | 18 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 34 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 30 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Բուժքույրական ծառայություններ | 52 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)